

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Ազգային, Գրական եւ Քաղաքական

ԽՄԲԱԳԻՐ — ՏՆՕՐԷՆ

ԲԻԻԶԱՆԴ Մ. ՊՕԶԱՃԵԱՆ

Գ. Շրջան

1900 Փետրուար 5

Թիւ 84 — Ը

هزارايداق غزنه

HANRAKIDAGUE

Journal Arménien Encyclopédique

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տարեկան Պոլսոյ համար	50 Դր.
Գաւառաց համար	60 ,
Արտասահման	15 Ֆր.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր Վեպը
Շաբաթական Քրօնիկ
Երկբարդ կեանք
Երկրագործութիւն
Ծառից սակ
Ամուսնալոյծն՝ ապերջանիկ
Ռօմանս (փերուած)
Քիչ մը զուարճալիք

Թ. Լ.
Բ. Պ.
Ե. ԳՕԼԱՆՃԵԱՆ
Բ. Պ.
Թ. Լապնիցեան
* * *
Ե. ԳՕԼԱՆՃԵԱՆ

40 փարա 40

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ կը ծախուի. 1. Դասըզիւղ, Արմէն ԷՅ. Զգուգնեանի Դեղարանը. — 2. Սամաքիա, Կայարանին մօտ, ծխականառ Յարութիւն Աղա Էժէրհանեանի խանութը. — 3. Կամուրջի գլուխը, ջրավանառ Նեան աղա Օգուգնեանի բով (նախկին ջրավանառ Պօլոս աղայի խանութը). — 4. Զրավանառ Սեփան աղայի խանութը. — 5. Մարգարեան, Պալենց, Ասենեան եւ Զարդարեան գրատունները. — 6. Բոլոր լրագրավանառներուն բով:

Դաւառներէ ո՛վ որ կը փափաքի ՀԱՆՐԱԳԻՏԱԿի գործակալութիւնն ստանձնել, կրնայ ուղղակի ՏԵՐԿՆՈՒՄԵԱՆՍ ղիմել:

ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Էսկի Զապթի հասցեսի Թիւ 61

1900

2 1 3 4 5 6 7 8 9 10

1 2 3 4 5 6 7 8 9 10

1 2 3 4 5 6 7 8 9 10

1 2 3 4 5 6 7 8 9 10

1 2 3 4 5 6 7 8 9 10

1 2 3 4 5 6 7 8 9 10

1 2 3 4 5 6 7 8 9 10

1 2 3 4 5 6 7 8 9 10

1 2 3 4 5 6 7 8 9 10

1 2 3 4 5 6 7 8 9 10

1 2 3 4 5 6 7 8 9 10


1 2 3 4 5 6 7 8 9 10

1 2 3 4 5 6 7 8 9 10

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Ազգային, Գրական եւ Քաղաքական



Գ. Շրջան

Թիւ 81 — Ը

Մեր կեանքէն քաղուած գողոս վիպակ մը պիտի հրամցունէ Հանրագիտակ իր ընթերցողներուն , իբր համաշաւ քերթօն , յաջորդ թիւէն սկսեալ

ԻՏԷԱԼԻՆ ՀԱՍԱԾ

խորագրով: Մասնաւորապէս մեր շաբաթաթերթին համար շարայարած է այս վեպը ՍՏԵՓԱՆ ԲԱՐԵԼԵԱՆ:

Պոլսահայերէս քիչեր հանչեան քերէս այս անունը: Բայց այդ «քիչ»երուն յիշողութեան խորը խոր մը շինած է արդէն ան՝ Մամուրեանի յոբելեանին առթիւ հրատարակած իր «Հոգիին ձօնը» անունին յուզիչ գրութեամբ , եւ այն միւս նորավեպերով որոնք երեւցան ասկէ առաջ Արեւելի ու Սուրհանդակի սիւներում , խանդովն համակ բարձ ու բեղուն երեւակայութեան մը:

Յիշեմք ասոնցմէ «Վիշքը» , «Անձնասիրութեան քոյնը» եւ մանաւանդ «Անակնկալը» որ օրաթերթի մը սահմանած մրցանակին արժանացաւ: Ասոնցմէ զայս , երաժշտական քրոնիկներ՝ զորս տուած է օրը օրին հին Արեւելիներու փախստեայ եղերուն:

Այսպէս , այս երիտասարդն ալ Սրվանեանի նման զուգընթաց մեակած է Դաւենակն ու Դրականութիւնը , երկուքին ալ անբաժնի թովիւ մեկմեկու մէջ ցոլացուցած:

Չենք ուզեր առաջուց ներքող հիւսել այս նոր գրութեան. կարգացողը բոլր ընդգրկայ անոր ապրում , հեւոտ տողերէն՝ երաժշտութեան կայծովը բորբոք պարմանիի մը տառապանքը գերանուրբ , ազապատող սիրտի մը տարփանքը բաբախուն , եւ , Հոգիին մէկ անտեղիտալի պէտքը նկատուիլը Անձնութիւնը կոչուած մարդուս է՛ն տեսական , է՛ն ազնուական զգացումին:

Ու այս բոլորը տողընդմէջ ընդելուզուած խոհերու սլացան կիսուածով եւ նիւթին պէս-պիտուն ոլորումով՝ որ երանգ ու կեանք դրած են վիպակին հանգոյցներուն մէջ:

ՅՈՒՐԱԹԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ



ԶԳԱՅԻՆ Վարչութեան ծանրաբեռն օրակարգին մէջ եթէ կար խնդիր մը որ անմիջական լուծում կը պահանջէր, անտարակոյս Կիլիկիոյ կաթողիկոսական ընտրութեան խնդիրն էր: Արդէն գիտէինք թէ Կայս. կառավարութիւնն արտօնած էր կատարել այդ ընտրութիւնը, հնաւանդ եւ օրինական ձեւին տակ: Որոշուած էր նաեւ որ Գատարական Նախարարութիւնն ու Ազգ. Պատրիարքարանն ի պաշտօնէ մէկ մէկ ներկայացուցիչ զրկեն Առանա, ընտրական գործողութեանց վրայ հակելու պաշտօնով: Կիլիկիոյ կաթողիկոսութեան բոլոր թեմերն հետեւապէս պիտի մասնակցէին ընտրութեան, իրենց եկեղեցական ու աշխարհական պատուիրակներուն միջոցաւ: Այս ամենը գիտէինք ու գիտենք արդէն, բայց չէինք գիտեր թէ ինչ ինչ ձեւակերպութիւնք, որք բանակցութեան նիւթ եղած էին, այսքան յապաղում պիտի առնէին: Եւ սակայն Գատարական Նախարարութեան կողմէ Ազգ. Պատրիարքարանի հաղորդուած վերջին կրտսէրներէն խնդրոյն լուծումը փութացնելու ընտրութիւն ունէր, եւ անոնք ոչ այժմ ամէն ժամանակէ աւելի ձեւապաշտ եղած են, վերջապէս ըմբռնեցին թէ ձեւը փրկելու կամէութեամբ՝ չէր արժեր վատնել թանկագին ժամանակ մը, երբ այդ ընդարձակ փնտրելի ժողովուրդը տարիներով անխնամ թողուած էր, եւ բողոքականութիւն ու կաթողի-

կութիւն ազատ ասպարէզ գտած էին մուտ գործելու այն տեղերն իսկ ուր յառաջագոյն գոյութիւն իսկ չունէին: Կիլիկիայէ եկած արձագանգներ անմիջական պէտքը ցոյց կուտային ընտրութիւնը փութացնելու, այլեւս թափուր չթողելու համար այդ պատմական աթոռն, որոյ գոյութեան պէտքը շատ իսկ բացատրուած է արդէն: Ս. Պատրիարքը, շրջահայեցութեամբ, խառն ժողովն ստիպողաբար ի նիստ հրաւիրեց սովորական որոշուած օրէն առաջ, զգալով թէ գործին կարեւորութիւնը յապաղում չի վերցնէր այլեւս: Քաղ. ու Կրօն. ժողովները, նախ առանձինն ու ապա միահամուռ նիստ դումարելով, վերջապէս համաձայնեցին սա՛ ձեւին կէտին վրայ թէ ողջմտութիւնն ամէն բանէ վեր է, եւ որոշեցին պաշտօնական վերջին հրահանգը տալ Տ. Խապայեան Սահակ Սրբազանի, Ազգ. Պատրիարքարանի Պատուիրակին, որպէս զի անմիջապէս փութայ յԱռանա, ընտրական ժողովոյ նախագահելու: Այսպէս թէ այնպէս, ուրախառիթ է տեսնել որ խնդիրն իր վերջնական լուծումն ստացաւ երկար յապաղումներէ վերջ, եւ այժմ Ընտրողական ժողովն կը մնայ կատարել ընտրութիւնը, իրեն առաջնորդ ունենալով ողջմտութիւնն ու ժամանակի փափկութիւնը, եւ կոչել այդ կարեւոր պաշտօնին աշնակախ եկեղեցական մը, որ գիտակից ըլլայ իր պաշտօնին ոգւոյն եւ գիտնայ կառավարել իր հօտը Պետութեան եւ Ազգին լաւ իմացուած շահուց համաձայն, խաղաղութեամբ եւ խղճամիտ հոգածութեամբ: Ամէն յոյս կայ թէ այս ընտրութիւն յաջողապէս ի գլուխ պիտի ելնէ ընդհուպ:

* * Կրօն. ժողովն սկսած է սթափիլ իր թմրութենէն: Իր կաղմութեան օրէն ի վեր, մաքէն իսկ չէր անցուցած դրոյններու վրայ Կրօնական հսկողութեան

մը պէտքը: Բայց հիմակ ի՞նչ հով ան-
ցաւ որ ինքն ալ, Ուսումն. Խորհրդոյ
պէս, ելեր է վարկ մը կը խնդրէ Ազգ.
Վարչութենէն, կրօնական Տեսչի մը ամ-
սականն ապահովելու համար: Արդեօք
պատրաստ ընտրելի՞ մը ունի, որովհե-
տեւ գիտենք թէ մեք Հայերս պաշտօնի
մը պէտքն ա՛յն ատեն միայն կ'զգանք
կամ կ'ստեղծենք՝ երբ հոգալիք ընտրե-
լիներ ունինք առձեռն: Չենք ըսեր թէ
կրօն. Ժողովը դպրոցներու մէջ կրօնա-
կան դաստիարակութեան վրայ անմի-
ջական հսկողութիւն ի գործ դնելու ի-
րաւունք չունի, այդ իրաւունքն ունի,
զոր տուած է Ազգ. Պատրիարքարանի
օրէնքը, եւ սակայն այդ հսկողութիւնն
ի գործ դնելու մէկէ աւելի միջոցներ
ունի: Ի՞նչ գործ կը բանին եկեղեցիներ-
ու քարոզիչները, ի՞նչ է անոնց պաշ-
տօնը: Փա՛ռք Աստուծոյ, եթէ թեմերը
թափուր եւ անառաջնորդ մնային, մեր
եկեղեցիները շէնցա՛ն քարոզիչներով,
եւ այսօր քարոզիչներ ունինք որ տուներ
տեղեր շինելու վրայ են. բայց երբեք
կ'անցընե՛ն իրենց մօռքէն թէ եկեղեցիին
քովիկը դպրոց մ'ալ կայ, ուր Հայ մա-
նուկը պարտի ուսնիլ իր նախնեաց հա-
ւատքը, զոր սակայն կարգ մը ուսու-
ցիչներ, հօր մօրի հովեր առած, ի-
րենց թարթափուն մօրով շարունակ
թարթափելու ետեւէ են: Մէկ կրօն.
տեսուչն ի՞նչ պիտի կրնայ ընել, շատ
շատ, տարին մէկ կամ երկու այցելու-
թիւն միայն պիտի կրնայ տալ Կ. Պոլսոյ
40 դպրոցներուն, ինչ որ անմիջական
հսկողութիւն ըսել չէ, մինչդեռ քարո-
զիչները զորս կրօն. Ժողովն ինք կը կար-
գէ, կրնան իրապէս անմիջական հսկո-
ղութիւն մը ի գործ դնել, եւ եթէ ոչ
ամէն շաբաթ, գէթ ամէն ամիս իրենց
շահեկան տեղեկագրերը տեղալ, կրօն.
Ժողովոյ խիղճն հանդուցանելու համար
թէ Հայ եկեղեցւոյ զաւակներն արդեօք
կը սնանին իրենց հարց ու նախնեաց հա-

ւատքով: Ազգ. Վարչութիւնը կրթական
Տեսչի մը ամսականին համար դրամ
գանելու անկարող եղած է, քանի որ
գաւառային կարօտութեանց այնքան
պէտքեր կան հոգալու, ո՛ւրկէ դրամ
պիտի գտնէ կրօն. Տեսչի մը պաշտօնին
համար, որ, մեր կարծեօք, բոլորովին
անպէտ է, քանի որ քարոզիչներն իրենց
պաշտօնին բնութեամբն իսկ այդ հսկո-
ղութիւնը կատարելու պարտաւոր են,
եւ քանի որ կրօն. Ժողովն է այդ պաշ-
տօնը բաշխողն, բնականաբար իրաւունք
ունի նաեւ անոնցմէ համար պահան-
ջելու: Ո՞չ ապաքէն կրօնուսոյցներն ալ
քարոզիչներն են մեծ մասամբ:

* * * Կրօն. Ժողովը կարնոյ առաջ-
նորդական Տեղապահին գոհունակու-
թիւն յայտնելու եւ Պանտրմայի առաջ.
Տեղապահին ալ դժգոհութիւն յայտնե-
լու առիթ ունեցած է վերջերս, գիտէ՞ք
ինչո՞ւ համար: Առաջինն աղքատ կնոջ
մը զլացեր է Ս. Հաղորդութիւնը, զլա-
ցե՛ր է նաեւ թաղմանական հանգէսը,
ինչո՞ւ, որովհետեւ այդ կին իր կեանքին
մէջ սայթաքեր եւ հոմանի ունեցեր է:
Երկրորդը, կրօն. Ժողովոյ ձգձգումնե-
րէն ձանձրանալով, ամուսնութիւն մը
լուծեր եւ ուրիշ մը կապեր է, ըստ այն
վարդապետութեան թէ ինչ որ կապէք՝
կապեալ ըլլայ, ինչ որ լուծէք՝ լուծեալ
ըլլայ: Բայց կ'ըսեն թէ կրօն. Ժողովը
գոհունակութիւնն յայտներ է, իսկ դժ-
գոհութիւնը մօռքէն միայն անցուցեր է,
եւ պաշտօնական ղեկուցման ձեւ չէ
տուեր անոր. արդեօք ինչո՞ւ: Ինք որ
կարգապահութեան այնքան նախանձա-
խնդիր է եւ ձեւապաշտ, ինչո՞ւ թաղեր
է խնդիրն իր ծոցին մէջ: Կրնո՞յ բացա-
րել արդեօք: Դալով կարնոյ առաջն.
Տեղապահին, ո՞վ տուաւ իրեն իշխանու-
թիւն վերջին հոգեւոր միաթարութիւնը
զլանալու զղացող կնոջ մը, որ մեղա՛յ
գոչեր է իր մեղաց համար, ինչո՞ւ զլա-
ցեր է այդ թողութիւնն անոր, արդեօք

աղքատ ըլլալուն համար: Ձեռք կրնար չընել այս վերջին հարցումն, երբ կը տեսնենք ամէն օր վարդապետներ, որք թեթեւ սրտով կը շարժին կամ քահանաներ որք անվայել ընթացքի մէջ կը գտնուին: Հանրատուներու կիները միթէ ամէն տարի չեն զղջար, միթէ ամէն տարի Արմաշ եւ Ս. Երուսաղէմ ուխտի չեն երթար, սրբավայրերու չեն մօտենար. ո՞վ կրնայ ուրանալ թէ այս այսպէս է: Ո՛հ, խտաբարոյ կրօնականք, մինչեւ ե՞րբ երկու կանգուն, խիղճ պիտի ունենաք: Ներողամտութիւնը շատ աւելի յինչ է քան խտաբարտութիւնը, մանաւանդ հոն ո՛ւր զղջում կայ, ճշմարտ զղջում, մահուան անկողնոյն մէջ: Եթէ չէք ուզեր որ ժողովուրդը խստիւ դատէ զձեզ, դուք ալ խստիւ մի՛ դատէք. «Մի՛ դատէք զի մի դատեսցիք»:

Բ. Պ.

ԵՐԿՐՈՐԴ ԿԵԱՆՔ

(ՆՈՐԱՎԷՊ)

Իրենց բաղդը որոշուած էր ուրեմն:

Լիւսի նորէն ծաղիկներուն պիտի դիմէր, նորէն գլխիկոր պիտի աշխատէր սեղանիին առջեւ, առանց տրտնջալու. նորէն պիտի քաջքշէր այս միօրինակ կեանքը որ ընդհատուած էր մէկ քանի ամիսներու յիմար երազէ մը: Ու Մարիամ ա՛լ նորէն պիտի հիւսէր, ինչպէս կ'ընէր երբեմն, նորէն առեղին ու կարծառին հետ պիտի մնար, մոռնալով ամէն բան, մինչեւ իր վիշտերը:

— Խենդ եմ ինչ եմ, կ'ըսէր աղջիկը ինքնիրեն երեկոյ մը, մինչդեռ Մարիամ մեկուսի իր թելը կ'ոլրէր՝ մետաքսէ սե ծո-

պեր շինելու համար, Ջարեհ աղէկ մը խընդաց երեսիս:

Հոն մօտը, պզտիկ քառակուսի հայելի մը կախուած էր պատէն. անոր մէջ իր դէմքը յանկարծ նշմարեց, տօգոյն ամպ մը անցաւ աչքերէն. ո՛րքան հիւանդոտ կ'երեւար, գուցէ... Աչքերն յանկարծ փղձկեցան, սե ու կծու յիշատակ մը ծակեց իր կուրծքը. յիշեց այն վայրկեանը ուր երեկոյ մը, ճիշտ այս միջոցին, վերջալոյսին կիսաստուերին տակ, անարդ լքումն ունեցած էր Ջարեհի թեւերուն մէջ, բլուրի մը դադաթը: Եւ ի՞նչպէս պիտի կրնար ջնջել անբուժելին, սե աղարտը իր մորթին տակ... Վայրկեան մը տարակուսեցաւ, այնպէս կարծեց թէ այն հայելին կը ստէր, թէ չէր կրնար այնպիսի բան մը գուշակել իր դէմքին վրայ: Լռեց: Յիմար կիրք մը, զայրոյթ մը կը լափիլիզէր իր այրած սիրտը: Ջղուտ մատները շարժեց մեքենայօրէն, ու յանկարծ կրկնոցալը ինկաւ, կոճակները քակուեցան, ու կարմիր բուրդէ անթեւ շապիկը մէկդի ընելով, սպիտակ փայլուն կուրծքը ցուցուց ամբողջովին հայելին մէջ: Ինչ մը նիհարեցած գտաւ զինքը՝ թեւեւ իր վիշտէն: Ի՞նչ ուրեմն, Լիւսի աղջիկ մը չէ՞ր: Այս լքումը աղարտ մը չէր ներմուծած իր մէջ, բնա՛ւ, այն լքումը պարզ հեշտանք մը եղած էր միայն, պզտիկ խենդ հաճոյք մը անվնաս որ բնաւ չէր դուպած իր մորթին...:

Նորէն հադաւ աճապարանքով իր հագուստները կսկծեցուցիչ տազնապով մը, հառաչքով մը զոր ինքն ալ չհասկցաւ: Սիրտը սաստիկ կը զարնէր, կ'զգար ծանեակներուն տարտամօրէն շարժիլը, կրկնոցակին եզերքը, անոր անկանոն բարախումներուն տակ: Ասիկա տարօրինակ երեցաւ իրեն: Ու երկար ատեն, ձեռքը կուրծքին վրայ, աչքերն հայելին խորը, անշարժ ու տխուր մնաց՝ ցուրտ սարսուռով մը իր մորթին մէջ:

* * *

Լիւսի հիւանդ էր, կամ այնպէս կը կարծէր, որովհետեւ սէրը հիւանդութիւն մըն է ինքնին:

Այն իրիկունը բնաւ չը քնացաւ : Բան-
դագուչանքով լի, Երկար երազ մը ունե-
ցաւ : Ճակատն ու ձեռքերը կ'այրէին : Ար-
տեանունքը երբ ա'լ ծանրացած դոցուէին,
աչքերուն մէջ տարօրինակ տենդ մը կ'ըզ-
գար, տաքութիւն մը որ կը թափանցէր
մինչեւ գանկը, ու երբ մղձաւանջ մը յոն-
կարծ բանալ կուտար արտեանունքը, եր-
կու ճրագներով լուսաւորուած սենեակը
մութ ու տխուր խորչի մը պէս կը ներկա-
յանար իր լայնցած ու կլորցած աչքերուն
առջեւ : Խաւարտչին ամպ մը երբեմն կը
ծածկէր տեսութիւնը : Պալլուն բիբերուն
մէջ արիւնի բեկբեկ գիծեր կը նշմարուէին :
Մարիամ կը հսկէր անկողնին մօտ, Սաղմոսը
ձեռքին մէջ, քանի մը կցկտուր բառեր
մրմնջելով որ չէին իմացուեր՝ հակառակ սեն-
եակին լուծեանը : Ծրագին լոյսը ծալ ծալ
կը փայլեցնէր իր մազերը որ սնարին վրայ
անխնամ թողուած էին : Երբեմն գարշանքի
ծամածուով մը կը նշմարուէր իր տոգունած
այտերուն վրայ : Միեւնոյն բառը շատ ան-
գամ կը կրկնէր կոկորդին խորունկէն խեղ-
դուկ բայց զօրաւոր ձայնով մը որուն վրայ
Մարիամ սարսափած կ'ընդհատէր իր աղօթք-
ները :

— «Պղծուած, պղծուած, պղծուած»

Ասիկա անտանելի ու այլանդակ թուե-
ցաւ Մարիամի :

Սաղմոսը միշտ ձեռքին մէջ, աւելի մօ-
տեցաւ անկողնին, ուշադիր, առանց աչ-
քերը բաժնելու անկէ : Տաք ու խոնաւ
չունջ մը կը սահէր ծածկոյէն ու կուգար
չօշափել մինչեւ Մարիամի շրթունքները :
Լիւսի միշտ աչքերը բացած, գրեթէ առանց
նայուածքի, անշարժ ու միօրինակ դիրքի
մը մէջ տարածուած, միշտ կը զառանցէր :
Իր բառերը խոստովանանք մ'երեւցան Մա-
րիամի, անարգ ու անհաւատալի խոստո-
վանանք մը որուն մէջ մի աւ մի կը թուէր
իր կիրքերը : Բայց անկարելի էր լռել :
Մարիամ կամաց մը մատներուն մէջ սեղմեց
անոր դաւաճալը, բժշկի մը պէս որ մտովին
կ'ուզէ համբել հիւանդի մը երակազարկը :
Վայրկեան մը կարծեց թէ Լիւսի յանկարծ
ջերմէ բռնուած էր : Ետոյ ձեռքովը դպե-
լով անոր ուսին, կամաց ձայնով մը .

— Լիւսի', Լիւսի' : Ի՞նչ ունիս, աղջիկս :

Լիւսիի աչքերը աւելի լայնցան, մազերը
թոթուեցան ընդոստ շարժումով մը որ
դարձեալ իրենց պսպղուն անշարժութեան
մէջ նետուեցան սրահին վրայ : սրունքները
աշխոյժ ցնցումով մը ճիգ մ'ըրին մէկդի ը-
նելու ծածկոցը, Ետոյ յանկարծ ալ ձեռքով
բռնն շարժում մ'ըրաւ ու Մարիամի ձեռքի
Սաղմոսը գետինը նետեց կարճ շաջիւնով մը :

— Ի՞նչեցա՞ր, աղջիկս, ի՞նչ եղար, ի՞նչ
կ'ընես, չը խօսի՞ս :

Բայց Լիւսի ձայն չհանեց, կամաց կամաց
ամփոփեց մարմինը անկողնին մէջ, աչքերը
փակեց, ու ա'լ առանց բանդագուչելու, հան-
դարտ քնացաւ : միայն մերթ ընդ մերթ
խեղդուկ խորդիւնով մը որ կը միանար Մա-
րիամի աղօթքներուն շարունակական մըր-
մունջին հետ :

* * *

Այս տարօրինակ հիւանդութեան վրայ
շարաթ մը անցած էր : Լիւսի քիչ մը ա-
պաքինած կը թուէր, առաջուան պէս հան-
դարտ կը խօսէր իր մօրը հետ, քիչ մը նի-
հարցած ու աւելի տոգոյն : Ա'լ բան մը չէր
ըսեր իր սիրոյն վրայ, միայն երբեմն կը
հարցնէր ցուրտ ու միօրինակ չեղով մը .

— «Մօրեղբայրս ե՞րբ պիտի գայ»

Անզգայ, ծերացած պառաւի մը դիմա-
գծերն ու շարժումներն ունէր : Երբեմն
խենդ ու խելառ խօսքեր մէջ կը բերէր, ի-
րենց այրած տունին, իրենց հին վայելք-
ներուն վրայ կը խօսէր, մօտաւոր ճամբոր-
դութիւն մը կ'երազէր Եւրոպայի փառաւոր
վայրերը : Երբեմն յանկարծ յիմար խոր-
հուրդ մը կ'զբաղեցնէր իր միտքը տղու մը
պէս՝ որ չուտով մը կը մարէր : Հիմայ ամէն
բան խաղալիք մ'եղած էր իրեն իր ձանձ-
րոյթի տազնապաներուն մէջ : Իր զգացումնե-
րը, իր խորհուրդները ամենքն ալ ճախա-
րակի թելի մը պէս ազատ գործել կուտար
իր հոգիին մէջ :

Քիչ անգամ դուրս կ'ելլէր : Գերեզմանա-
տունի մը դիմաց, եղեւիններուն տակ, ա-
ռանձին գիրք մը ձեռքին մէջ, կ'անցընէր
երեկոյեան ժամերը : Միւղիքը չէր սիրեր
բնաւ : կաղինօները մէկմէկ տանջարաններ
կը թուէին իրեն ուր ակամայ խօլ թըր-
թուումներ լարերու կ'ուզեն հմայել չարչար-

ուած հոգին, Տեսակ մը կեղծ ու սնտոի
շգուանք կը գտնէր ատոր մէջ:

* * *

Զարեհի հիւանդութիւնը շատ տարբեր
էր իրենէն: Գրեթէ ստիպուած էր մոռնալ
Լիւսին ու ատոր համար կը տանջէր ուղե-
ղը... Իր սէրը տարօրինակ լքում մ'ունե-
ցած էր: Տիգրան իր միակ սարսափն էր,
ու Աննիկ իր միակ սփոփանքը, բայց սար-
սափը յաղթած էր միւսին, ու խեղճ երիտա-
սարդը պիտի հնազանդէր տղու մը պէս,
ինքը հարուստ էր, շատ հարուստ, ու Լիւ-
սի աղքատ, անանուն մէկը: Տեսակ մը
կծու աւանդութիւն, կոպիտ ծթաւած
դանկերու աւանդութիւն, երբ կը տեսնէր
իր հօրը ընդդիմանալը իր սիրոյն դէմ, մի-
միայն Լիւսիի աղքատ ըլլալուն համար,
չդիտելով բնաւ անոր հոգին...

Որովհետեւ ճղճիւմ նկարագիր մ'ունէր
Զարեհ, հակառակ իր սիրտը փարած ըլ-
լալուն աղջկան, ա'լ պիտի հնազանդէր,
ա'լ պիտի բաժնուէր Լիւսիէն յաւիտենա-
պէս, պիտի մոռնար այդ աղքատ գեղեցիկ
աղջիկը, բոլոր իր ծեղծեքունակ խոստում-
ները, երեկոյները, ծառերուն ստուերնե-
րուն տակ, թեւ թեւ:

Պիտի մոռնա'ր ամէն բան:

Երկրորդ պզտիկ քարտ մը գոր ինքն ալ
զարմացաւ ա'յնքան համարձակ գրելուն հա-
մար, ա'լ յաւիտենապէս կը վճռէր ամէն
բան:

Հոգիի շարժումներ կան որ որոշ գիտակ-
ցութեան մը չըջանակին մէջ չեն ապրիր,
և յետոյ, ա'յնքան հանդարտ լռիկ շարժում-
ներ ամէնէն պարզ բաներուն պէս, մինչդեռ
անոնք ամէնէն քայքայիչ ջլատիչ բաներն
են...

Սիրոյ վիշտերը պատմութիւն չունին:

Զարեհ հեռացած էր:

Լիւսի նորէն ծաղիկներ կը շինէր, ու
ա'լ չէր փորձեր սիրել մէկը:

Փոքրիկ ծաղկաթերթերը չերամի խո-
ղակէ ու վարդագոյն նրբաթուղթէ պատ-
րաստած, իգաները իրենց գեղին ու ճեր-
մակ հոնտերով, տերեւները, կանաչ եր-
կար ցօղունները, ու իր պզտիկ փափուկ
մատներովը ձևած գոյնզգոյն շափրակները

հիմայ իր լռիկ մտերիմներն էին, հողէ կան-
թեղին տակ որ հազիւ կը լուսաւորէր իր
խցիկը:

Մօր մը պէս կ'աշխատէր, ա'լ չէր նա-
յեր հայելիներու մէջ, արդուզարդի պէտք
չունէր: Որքա'ն փոխուած էր՝ ինչպէս խե-
լառ անժոյժ փոթորիկէ մը վերջ ծովին առ-
մազուն տարածութիւնը միապաղաղ:

Դիմագծերը քիչ մը աւելի հաստցած է-
էին, քիչ մ'աւելի մօրը կը նմանէր: Ու կը
մտածէր թէ սիրող մը կար դեռ իր լքած
հոգին, Մարիամն էր ան, ուրիշ ոչ մէկը,
ոչ ալ իր մօրեղբայրը, ա'յնքան հարուստ
որ կրնար, եթէ ուզէր, գեղեցիկ դրամո-
փիտով մը նորէն մեղմել Տիգրանի դրժումը,
ու նորէն Զարեհի գիրկը վերադարձնել
գինքը՝ երջանիկ:

Անգո'ւթ դրամ:

* * *

Իրիկուն մը նորէն իր սիրոյն անցեալ
հրայրքները յիշեց:

—Ձէ', աս ծաղիկները շահ մը չունին
ինծի համար, պարապ տեղ կ'աշխատիմ, ա-
մէն տեղ կը վխտայ անոնցմով, պէտք չու-
նին իմեններու:

... Խեղճ ծաղիկներ, պզտիկ մանրիկ
քնքուշ թերթեր, հիմա դուք ալ մեռած
էք, խամրած, թօշնած յոյսերուն հետ գոր
իր փափուկ սիրտը կ'օրրէր մեղմիւ ձեր մօ-
տը հսկող լամբային տակ:

Ու խօլ հառաչք մը թռաւ իր կուրծքէն:
Երկնցուց թեւը սեղանին վրայ, և ծաղիկ-
ները մէկիկ մէկիկ գետինը ինկան:

Բառորդ մը քնացաւ, ծռեց իր գլուխը
իր վշտին մէջ թաթխուած, աթոռին վրայ
կծկտիկ, պզտիկ անզգայ ծրարի մը պէս
աչքերը փակուած, դէմքը դալկահար,
նուրբ ճառագայթ մը ինկաւ ուսերուն վրայ
որ փափուկ փայփայանքով մը շոյեց անոր
սպիտակ մորթը:

Արեւը մարը մտած էր: Սլիքները վեր
վեր կ'ելլէին միշտ տխուր չաչիւններով,
հովը կը սուլէր, կը սուլէր...

Յանկարծ արթնցաւ: Այս վերջին շուր
վերջին յոյս մը արթնցուցած էր իրեն մէջ:
Որքա'ն երջանիկ էր: Ձէ', ա'լ չպիտի լար,
ա'լ չպիտի լար:

Նոր կեանք մը պիտի ապրէր, ուր յաւիտենապէս պիտի քնանային իր երակները, ու ջիղերը ա՛լ չպիտի փորձէին իրենց անառակ տառապեցնող գալարումները:

Բոլորովին նոր կեանք մը, թարմութիւն իր, այն ծաղիկներուն պէս ուր յանկարծական տարափներու տակ կը փթթին, կը պսպղան, հակառակ իրենց տօգունութեան:

* * *

Կեղեցիկ ընդարձակ սլարտէզ մը: Շիշի մայրապետանոցը ճերմակ հսկայ պատերով շրջապատուած: Սրահներուն մէջ, ամենքն ալ մաքուր, կոկիկ, պարզ, սիրուն. դաշնակի ստեղծումներ ատեն ատեն կուգան ընդհատել պատկառոտ հոծ լուծիւնը մենաստանին: Հով մը հասնարոտ, գաղջ շունչով մը կը շփփէր ծառերը ու կարմրած չորցած տերեւները վար կ'իյնային հեղիկ, խոնաւուտ հողին վրայ: Վտիտ սև խաչի մը առջեւ, դրան ճակատը կախուած, ալեխառն մազերով տօգոյն միջահասակ աղջիկ մը սենեակին մերկ տախտակամածին վրայ ծնրադրած էր:

Աչքերը, յոգնած սեւ աչքեր որ խորունկէն նայուածք մը ունէին մտածկոտ, վեհերոտ կը յառէին խաչեալին:

Խաչեալ մը չէ՞ր ինքն ալ, այդ աղջիկը, Լիւսին. եթէ խաչեալին դադարաւոր միայն յարութիւն առած է մեր մէջ, Լիւսին մարմնապէս յարութիւն առած էր, հոս, այս անբիծ սրահին մէջ:

Աղօթքը աւարտած էր:

Դաշնակին ստեղծումները կը շարունակուէին անկիւններուն մէջ, ծանր, երկար... Մեղեդիներ են ասոնք որ մոռացումին անհունութեանը մէջ կը յանկուցանեն հողին, սև լայն բաղնիքներու պատկառոտ մանուածումները կը փարին պատուհաններուն, ու Լիւսին ալեհեր, Լիւսին հանդարտիկ, մաքուր օդ կը ծծէր, ատեն ատեն տխուր բայց գուարթ անուշութեամբ մը մըմնջելով:

— Որքա՛ն երջանիկ եմ հոս:

ԵՂԻՍԵՆ ԳՕԼԱՆՃԵԱՆ

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

ՀԱՆՔԱՅԻՆ ԱՂԲԵՐՈՒՆ ԱԶԴՈՒՈՒԹԻՒՆԸ

Արդէն ըսինք թէ երկար ատեն կարծուած էր որ գործարանաւոր նիւթերը միայն արգասաւորիչ գորութիւն ունին, փառութեան կամ նեխութեան բոլոր երևոյթները կրելէ ետք: Յետոյ հասկցուեցաւ թէ հանքային նիւթերն ալ, իբրև պարարտութիւն, կրնան աղգուութիւն ունենալ բոյսերուն վրայ: Այս գիւտին ճշմարտութիւնն ապացուցուեցաւ շարք մը փորձերով, այսինքն այնպիսի մշակական փորձեր կատարուելով, որոց մէջ կենդանական կամ բուսական նիւթերու ու է մասնիկ մուտ չէր գտնուիր:

Ա. ՓՈՐՁ. — Այրած (calciné) աւաղի մէջ քանի մը ցորեն սերմանեցին, զոր ոգոգեցին պարզ ջուրով: Յորենները ծլեցան, աճումն իր ընթացքը շարունակեց, և անշուշտ կը հասկցուի թէ հունձքն առատ չեղաւ, սակայն սերմանուած քանակութեանէն աւելի եղաւ. իբր 6 կրամ ցորեն ձեռք բերուեցաւ, առանց ո եւ ե աղբի: Մի միայն արուեստէ՛ն ու ջուրէ՛ն էր որ բոյսը քաղած էր այս նիւթի յաւելումը:

Բ. ՓՈՐՁ. — Նախորդ փորձին մէջ եղածին պէս, քանի մը ցորեններ ցանեցին, եւ այս անգամ այրած աւաղին վրայ աւելցուցին բորակածին (ազօդ) չպարունակող հանքային ճիւրբեր: Հունձքը շատ լաւ չեղաւ, միայն 8 կրամի հասաւ:

Գ. ՓՈՐՁ. — Ուրիշ փորձի մը մէջ, այրած աւաղին վրայ աւելցուցին բորակածնաւոր նիւթեր, առանց հանքային աղբերու: Հունձքն 9 կրամի հասաւ:

Դ. ՓՈՐՁ. — Այրած աւաղին վրայ աւելցուցին ո՛չ միայն նախորդ փորձին հանքային տարրները, բօղաս, ասիս Թօսթօրիֆ, կիր եււն. այլեւ ազօդ: Այս ամբողջացած պարարտութեան արդիւնքը հրաշալի եղաւ: Հունձքը գրեթէ կրկնապատկուեցաւ: Ձեռք բերուած արդիւնքները կրնան բացատրուիլ գրեթէ հետեւեալ թիւերով:

Չուտ աւաղին մէջ ձեռք բերուեցաւ	6 կրմ. ցորեն
Ազօդ չպարունակող հանքային նիւթերով	8 » »
Միայն ազօդով	9 » »
Հանքային նիւթերով եւ ազօդով	25 » »

Ուրեմն այս փորձերէն կրնանք հետեւեալ եզրակացութիւններն հանել .

1. Հանգային պարասութիւնք արգասաւորիչ զօրութիւն մը ունին :

2. Այս հանգային զոյացութիւնք նոյն եւնայն նիւթերուն հետ որք կը զսնուին ազարակի աղբին մէջ :

3. Աղբն իւր արգասաւորիչ զօրութիւնք մեծ մասամբ կը պարսի այս նիւթերուն :

Քանի մը գիտնականներ, աւելի բնագէտ քան երկրագործ, ասկէ հետեւեցուցին թէ կարելի էր զանց առնել ազարակի աղբը, եւ մի միայն հանքային պարարտութիւններ գործածել . Սխալ մ'է այս : Աղբը լի է քիմիական յատկութիւններ չունի, այլեւ ֆիզիքայէս կ'ազնուացնէ, կը բարւոքէ հողը : Միւս կողմէ ազարակի աղբը կարծես պահեստի դրամագլուխ մ'է, որ մաս առ մաս հողին կը յանձնէ իւր արգասաւորիչ նիւթը, զոր միշտ դիւրին է պահել պահպանել ուղեւորած աստիճանին մէջ, քիմիական պարարտութեանց միջոցաւ :

ՀԱՆՔԱՅԻՆ ԱՂԲԵՐՈՒ ԿԻՐԱՌՈՒԹԻՒՆԸ

Հաստատուն վիճակի մէջ տրուած հանքային աղբերու կիրառութեան մէջ, շատ կարեւոր է աչքի առջեւ ունենալ սա խընդիրը թէ չորս գլխաւոր տարրները, ազոդ, ասիւս ֆոսֆորի, բոքս և կիր, ոչ միայն բաւական, այլ և համեմատական քանակութիւն մը պարտին ունենալ, ի նկատ առնելով նաեւ հողին կանխաւ պարունակածը : Այս չորս արգասաւորիչ տարրերէն ոչ մէկը պէտք է լիովին պակսի, ապա թէ ոչ միւսներն անօգուտ կը դառնան, եւ թերեւս վտանգաւոր կ'ըլլան :

Մշակուած բոյսերու տեսակին համաձայն, անհրաժեշտ է առաւելակիւս ընել այն տարրը կամ տարրները չորս կը պահանջէ այդ բոյսը : Եթէ եգիպտացորեն մշակենք, ասիւս ֆոսֆորի պէտք ունինք . որթատունկին համար կալաքարը (բօքս) անհրաժեշտ է :

Իւրաքանչիւր բոյսի նախամեծար համարած տարրները կարելի չէ քմահաճօրէն որոշել : Ստէպ խիստ փափուկ քիմիական տարրալուծութիւններով և զործնական փորձերով միայն կրնանք որոշել : Միևնոյն

հողին մէջ, առուոյտ եւ կանեփ մշակելով, կրնանք բաղդատական փորձ մը կատարել, հասկնալու համար թէ բորակածնաւոր նիւթերն ի՞նչ ազդեցութիւն կրնան ընել ընդեղէններուն վրայ : Կատարուած այդպիսի փորձէ մը հասկցուած է թէ առուոյտը կ'օգտուի հանքային պարարտութիւններէ, առանց պէտք ունենալու բորակածինի (ազոդ), և թէ կանեփը, ընդհակառակն, կը պահանջէ բորակածին : Մշակն իւր արտերուն մէջ այս օրինակ փորձեր կատարելով, կրնայ իւր հողին վիճակին տեղեկանալ : Արտի մը անկիւնը, կրնանք քով քովի մշակել ընդեղէններ, որք կրնան պէտք չունենալ ազոդի, ինչպէս նաեւ արմուիք մը, օրինակի համար ցորեն, որ ստիպողաբար ազոդ կը պահանջէ : Եթէ ընդեղէնք աղէկ աճին, և ցորենն ընդհակառակն աղէկ չբուսնի, պատճառը սա է որ հանքային տարրները, ասիւս ֆոսֆորի, բոքս և կիր, բաւական քանակութեամբ կը գտնուին այդ հողին մէջ, մինչդեռ ընդհակառակն ազոդը կը պակսի, վասն զի ցորենն առաւելապէս պէտք ունի այս վերջին տարրին : Իսկ եթէ ցորենն ալ, ընդեղէններն ալ հաւասարապէս աղէկ աճին, ըսել է թէ հողը կ'աւարեալ աղբ կը պարունակէ, այսինքն չորս արգասաւորիչ տարրներն ալ միանգամայն : Այս և ասոր նման փորձերով կրնանք քաղել հարկ եղած տեղեկութիւնները, հասկնալու համար թէ ո՞ր պարարտութիւնը կը պակսի, որպէս զի ամբողջացնենք զայն, եւ այս փորձերուն մէջ է որ իյայտ կուգայ քիմիական պարարտութեանց անփխտելի օգտակարութիւնը, զի ազարակի աղբով երբեք կարելի չէ այսպիսի փորձեր կատարել :

ԾԱՆՈԹ.—Արմատները կը պարունակեն թթու մը [acide] որ աղբերը կը լուծէ, եւ թոյլ կուտայ անոնց թափանցել բոյսին հիւսուածներուն մէջ, եւ խառնուիլ աւելին [sève] հետ : Բայց որպէս զի արմատը կարենայ աղբը ծծել, անհրաժեշտ պայման մ'է որ այդ աղբ, մանաւանդ եթէ հաստատուն է եւ ոչ-լուծական, արմատին հետ անմիջական շօշափման մէջ գտնուի : Ուրեմն պէտք է որ սնուցիչ նիւթերը տարածուած ըլլան հողին ամէն մասերուն մէջ ուր արմատները պիտի զարգանան : Եթէ աղբէ զուրկ կէտ մը գտնուի, արմատը պիտի չկրնայ ծծել ոչ մէկ սննդաբար նիւթ, երբ իր ծծիչ մարմնները տարածուին այդ աղբազուրկ կէտին վրայ : Ասկէ սա կը հետեւի թէ 1. Պէտք է աղբը կարելի եղածին չափ աղէկ փռելի վերածել : 2. Ըստ կարի ամենամեծ խնամքով խառնել հողին հետ :

Հող (Sol) եւ ՆերքնաՀող (Sous-sol)

Երկիրը, երկրագործութեան տեսակէ-
տով, կը բաղկանայ վերահողէ (sol) և ներք-
նահողէ: Վերահողը գետնին մակերեւոյ-
թի մասն է, որու վրայ կը քաղենք, եւ որ
կը կոչուի նաեւ վարուցանի կամ բուսական
խաւ: Ներքնահողն՝ առաջնոյն տակը գլու-
նուած խորունկ մասն է:

Վերահողը կազմուած է տարրալուծ-
ուած բոյսերու և կենդանիներու գործարա-
նաւոր բեկորներով, որք խառնուած ու մի-
ացած են նոյն ինքն հողին հանքային մաս-
նիկներուն հետ, օդին, ջերմութեան, սառ-
նամանիքներու, անձրեւներու, հովերու,
արօրադրութեանց (հերկի) ազդեցութեան
տակ: Վերահողին զանազան տարրներն ի-
րու հետ միացած են շատ փոփոխելի համե-
մատութիւններով: Վերահողն ու ներքնա-
հողն էապէս կազմուած են չորս գլխաւոր
տարրներէ, կրաքար (calcaire), կաւ (argile),
բնական քար (silice) և փտահող (աղբուհող
— terreau):

Կրաքար. — Կրաքարը գոյացութիւն մ'է,
որով կիր կը շինուի: Կաւիճը, մէկ քանի
շինուածքարեր, կուճի (մարմար) տեսակ-
ները, գաճաքարը և այլն կրաքարեր են:
Կրաքարն իր մէկ մասնաւոր յատկութեամբ
կը յայտնուի: Կ'սկսի եռալ, պղպջալ, երբ
թթուով մը, օրինակի համար, զօրաւոր քա-
ցախով թրջենք զայն: Հողին հետ խառ-
նուելով, կրաքարը կը նպաստէ զայն թա-
փանցելի ընելու օդին եւ ջուրին, և միան-
գամայն կակղելու: Բոյսերուն կը մատակա-
րարէ կիրի տարրն, որ անհրաժեշտ է անոնց
ածման: Աղէկ հող մը $5-10\frac{1}{2}$ փոշիացեալ
կրաքար (calcaire pulvérulent) պարու-
նակելու է:

Կաւ. — Կաւը հող մ'է հոծ և կակուղ,
որ կրակին առջեւ կը կարծրանայ. ասոր
նախատիպարն է քաղցնը (ճերմակ կաւ մը)
զոր յախճապակի շինելու կը գործածեն: Իր
աւելի կամ պակաս զուտ ըլլալուն համե-
մատ, կը ծառայէ ծխափողերու (լիւլէ), ա-
ղիւսներու, սկաւառակներու ևլն, շինու-
թեան:

Իր գլխաւոր յատկութիւնն է անթա-
փանցկութիւնը, այսինքն. թող չի տար որ

ջուրը ներս թափանցէ, զոր անյադարար կը
ծծէ և դժուարաւ կը կորսնցնէ: Ենթադրե-
ցէք բոլորովին կաւուտ հող մը, ջուրերը
պիտի կենան անոր մակերեւոյթին վրայ,
որ իրապէս ճահիճ մը պիտի դառնայ: Կա-
ւաղուրկ հող մը, միւս կողմէ, պիտի գործէ
իրբեւ մաղ մը, զտոց մը, որ պիտի մզէ
բովանդակ խոնաւութիւնն որուն պէտք ու-
նին սակայն բոյսերը:

ԲնԱԿԱՅԾՔԱՐ. — Բնական քարը, որ բը-
նութեան մէջ խիստ մեծ դեր մը կը կա-
տարէ, գրեթէ զուտ վիճակի մէջ կը ներկա-
յանայ կայծքարի (silex, pierre à fusil, չափ-
մագ թաշը) ձեւին տակ: Բնական աղբակ-
ներու ներգործութեան տակ բարակ փոշիի
վերածուելով, ինչ ինչ աւազներ (sable) կը
կազմէ:

ՓՏԱՀՈՂ. — Փտահողը սև գոյն ունի, եւ
կը բաղկանայ մանաւանդ գործարանաւոր
նիւթերէ. — բուսական նիւթերէ, որք հո-
ղին վրայ մշակուած բոյսերու բեկորներէն
յառաջ կուգան. կենդանական նիւթերէ,
որք անասնոց կղկղանքէն, աղբերէն յառաջ
կուգան: Հետեւապէս փտահողը ճոխ է բո-
րակածինով:

Բուսահողը (humus) հողին արգասաւոր
մասն է, այսինքն՝ պահեստն արգասաւորու-
թեան զոր երկրագործը պատշաճ պարար-
տութեանց կիրառութեամբ պահել պահպա-
նելու և աւելցնելու համար ամէն ինամբ
տանելու է: Հող մը, որ մեր թուած տարր-
ներէն մին կամ միւսն առաւելապէս կը պա-
րունակէ, կը կոչուի կրաքարային, կաւա-
յին, բնական քարային կամ բուսահողային
(humifère):

Քիմիական տարրալուծութիւնը կը ճանչ-
ցընէ հողերուն ճիշտ բաղադրութիւնը. բայց
որովհետեւ ստէպ դժուարին է այդ միջոցին
դիմել, կրնանք շատանալ այն նշաններով
զորս հողին բնութեան վրայ կրնան տալ
այն բոյսերն իսկ, որք ինքնաբերաբար
վայրի վիճակի մէջ կ'աճին անոր մէջ:

Կրաքարային հողերու մէջ ի բնէ կ'աճին
կարմիր կովացորեանը (mélampyre rouge,
գարամուգ), եզնարգել onoris կամ arrête —
boeuf). Կաւային և խոնաւ հողերու մէջ,
ձիագին (prêle, հաւթեթ-իւլ-բուլ), խոճկո-

րակը (tussilage կամ pas-d'âne, ֆիլե սա-
պանը)։ կայծքարային, աւաղուտ հողերու
մէջ, ցախը (bruyère, սիւբիւրկէ օքու, Ֆուկ-
սա), պտերը (fougère, էյրէյթի օքու)։

Անքարուտ, ընտիր (terre franche) հո-
ղեր են ա՛յն հողերն, որք բաւական խորու-
թիւն ունին և կը բաղկանան բնական ծ-
քարէ, կաւէ, կրաքարէ և փտահողէ, գիրար
հաւասարակշռող համեմատութեամբ։ Ան-
քարուտ հողերը 100 մասի վրայ կը պարու-
նակեն իբր 50 մաս բնական ծքար, 25 մաս
կաւ, 9—10 մաս փոշիացեալ կրաքար, եւ
5—10 մաս փտահող։ Այս տարրերը պար-
զապէս իրարու քով չեն եկած, այլ միացած
են ա՛յնքան սերտիւ եւ ներքնապէս որ կա-
րելի չէ զանազանել զանոնք մանրադէտի
մը միջոցաւ իսկ։ Վայրի եղերդը (chicorée
sauvage), թանթրուենին (sureau herbacé,
միւրվեթ) անքարուտ հողերու սեփական են։

Ներքնահողը մինչեւ աստիճան մը ազ-
դեցութիւն ունի վերնահողին վրայ։ Այս-
պէս, կաւուտ ներքնահողը կը պահէ աւա-
զուտ վերնահողի մը խոնաւութիւնը, մինչ-
դեռ աւաղուտ ներքնահող մը կաւային հո-
ղէն կը բառնայ իր չափազանց խոնաւու-
թիւնը։ Երբեմն կարելի է մեծ օգուտ քա-
ղել հողը խորունկ հերկելով, ներքնահողին
մէկ մասը վերնահողին հետ խառնելու եւ
այսպէս միոյն եւ միւսին առաւելութիւննե-
րը միացնելու համար։

Շարունակելի

— 3619 —

Ս Է Ճ Է Լ Լ Է

ՕՍՄ. ՔԱՂ. ՕՐԻՆԱԳԻՐՔ

Սոյն օրինագրքին հայերէն թարգմանու-
թիւնն և թուրքերէն արտասանութիւնը գէմ
առ դէմ հրատարակուած են, հինգ հատոր-
ներու մէջ ամփոփուած։ Իւրաքանչիւր հա-
տորի գինն է 10 զրուշ, 5 հատորն ի միա-
սին առնել ուղողին համար 40 զրուշ, կը
ծախուի բոլոր գրաժառանգներուն քով։ Գա-
ւառներէն եթէ 45 զրշի փոսթայի բուշ զըր-
կուի Հանրագիտակի Տնօրէնութեան փոս-
թայով կը շրկուի յանձնարարեալ ծրարով։

ԾԱՌԻՆ ՏԱԿ



ՄԱՌՈՒԱՆ հանդարտ միջօրէ
մըն է։ Տերեւ մը չերերար,
ոչ ալ կտուց մը կը շաղակրա-
տէ շուրջի թաւուտներէն։

Հայնչի վճիտ աւազանը յափրանքով կ'ըմ-
պէ զեղիւ ջերմութիւնը ցորեկուան, ու շուր-
ջը շարուած թաղարներէն փափկասուն ծա-
ղիկներ՝ արեւին ջլթիկ լոյսէն աչքերնին ա-
ռած՝ կը մրափեն ձանձրոյթով։ Գովտանքը,
կարմիր ամաններուն ձգած ափ մը շուքին
մէջ գորտեր նստած են կիւղ՝ որոնք ա-
պուշ նայուածքով մը կարծես կը մտախոհեն
իրենց երկակենցաղի կեա՛նքը անիմաստ։

Կնիւններու նկարչային խուրձ մը կ'ար-
տացայտի աւազանին սլորտէն, իր նրբա-
թել չիւղերուն ստուերովը ճեղքտելով
յգիւուն այտը աւաղանին։ Զուրի օձ մը ա-
ղամող կ'ողորուի ատոնց մէջ, բերանը դո-
ղօջ մը խածած։ Ու սէղերը կը սարսըռին...

Քանի մը քայլ վերօք, դալար դարա-
տափը կը կոթողէ իր վրայ դարեւոր հսկայ
թմբի մը, ճիւղճղանքը խօլարձակ փռած
կապոյտին մէջ։ Անոր տակ, հորիզոնաձեւ
յաղթ ոստէ մը կախուած են գոյգ պարան-
ներ՝ վարը տախտակի բեկորով մը, որուն
վրայ աղջիկ մը նստած կ'օրուի մինակը։

Կախօրրանին մէն միերթեւեկին, սրուն-
քը իրար միացուցած, դեղին կիսակօշիկին
ներբանովը պինդ դափր մը կուտայ գետնին
եւ կը նետուի աջ ձախ օդին մէջ լքո՛ւն ու
երջանիկ...

Անուշ խարտեաշ մըն է ան։ Արեւը թըմ-
բին սաղարթներէն թորուելով մաղուելով՝
կուգայ ճաճանչել ոսկի քիստերու գոյն իր
վարսերուն վրայ որոնք ծոծրակն ի վար կը
ջլւլէժին, եւ որոնց մէջ խիղբ նետած է բո-
լորակ սանտր մը արծաթէ։ Ու պարանոցը
ալապաստրի՝ պէս ողորկ՝ պիսակուած է դե-
ղին սաթէ համրելով մը, թերթատ վարդի
վրայ ոսկի նարգէս ցանուած տեսնելու
պատրանքը տալով աչքին։

Տղայ է դեռ։ Ատիկա կ'ընդգագս իր

գոգնոցէն՝ որուն տակ լանջքին գոյգ կոհակը թեթեւ մը կ'ուռի, ինք՝ անոր թարմ աճումին անգիտակ։ Ատիկա կ'ընդգդաս նաեւ իր աչքերուն երկինքէն՝ ուր աշխարհի անգէտ քնքուշ կուսութիւնը կը փողփողի, և այն լոյս երեսէն ուր անմեղութեան շնորհը կը ծփայ։

Բունին քով, կանանչին վրայ, դպրոցի գիրք մը, կաղամար ու տետրակներ ձգուած են անխնամ։

Ու կ'երգէ՝ ալ, անանկ հիացիկ ձայնով մը ուր վտակի մը քմշոտ կարկաչը կայ եւ ազնիւ ֆլիւթի մը սոյլը թրթրակ, կ'երգէ՝ ան սեռեցեացի մը մոռցուած սա տունը։

Ձայնը կ'երգէ սէր ու զգուանք,
Համակ յուզում եւ սարսուռ...
Ալ հերթի՛ր են երգը ու նուագ,
Բոց աչքերդ ինձ դարձուր...։

Անգիտակ, ընչովի՛ն անգիտակ արտասանած բառերուն իմաստին, կը կրկնէ, կ'երեքնէ՝ զայն իր ճօճումին հետ թափ տալով նաեւ երգուածքին, եւ հրամայած բարձրութիւններուն հանելով կախօրրանն ու ձայնիկը։

Անդին, անոր անձնիւր տարուբերին, պառկող բիւրեղ աւազանը կը գողնայ գողտր պատկերը իր հայլիին մէջ, շուշանաթոյր կարճ քղանցքին զաղտնապահ ծալքերէն բռնէ մինչեւ սեւ գուլպայէ սրունքները, և այն գոյգ ծղիբը կաթնորակ որ քովընտի չուաններուն պլլուած են խորձուիլներո՛ւ պէս մատղշուկ։

* * *

...Օրուէ՛ դուն, օրուէ՛, կայտառ, պայծա՛ռ աղջիկ, ու երգէ՛ այդ երգը որուն մէջ ձայնիդ ներքողը կայ, և տարփոտ պարմանիի մը ըղձա՛նքը բոցանուտ։

Ուշ կամ կանուխ դո՛ւն ալ ճանչնաս պիտի աշխարհքը, և տեսնաս թէ ի՞նչ համ է ըմպանքը վիշտին։ Երաներուդ մէջ, վերնամաշկիդ տակ ու լանջքիդ խորը պիտի զգաս այն կծուակիծ հոսանուտը զոր Սէրը պիտի քալեցնէ գողունի, որպէս զի սկսիս հառաչի՛ շնչառութեանդ։ Ան ատեն զգալով է որ պիտի երգես, ու բառերուն հետ,

եղանակին հետ պիտի վրդովիս, պիտի արտասուես ու պիտի յուսաս։

Այո՛ պիտի յուսա՛ս...։

Վաղը, երբոր այս թմբիին տակ գաս նորէն, չուզե՛ս պիտի պարաններէն առկախիլ, հապա կանաչ կողքով հատոր մը թըղտատել, կամ աւազանին եզրը երթալ՝ տուայտ դիմագիծդ դիտելու։ Այսօր լքուն ու երջանիկ, այնօր տխո՛ւր ու երազուն։

Վաղը, կ'ըսեմ, մոռնա՛ս պիտի օրուիլներդ, որովհետեւ, ա՛հ, օրելու դերը ստանձնես պիտի, սենեակիդ անկիւնը ծունկ չոգած պտըտիկ հրեշտակիդ խանձարուրին քով։

Ու կանչածդ՝ որ հիմայ սիրերդ մըն է խանդոտ, օրո՛ւր մը դառնայ պիտի, աղիքներուդ ալքէն փրցուած խօսքերով, մեղանուշ, աղերսո՛ղ օրօր մը, հեշտանքով խփելու համար զաւկիդ աշկունքը փաղփուն...։

Օրուէ՛ դուն, օրուէ՛, խարտեալ, մատաղա՛շ աղջիկ։

Հինգ լայն թեթեւ

— 000000 —

ԱՄՈՒՍՆԱԼՈՅԾՆ ԱՊԵՐՋԱՆԻԿ

ԳԻՒՂԱՎԷՊ

Մասն Ա.

2

ՍՏԱՆ ԳԻՒՂԸ

[Շարունակութիւն է թիւէն]

Ժողովուրդի մը հոգին է կրօնքը։ Երբ կրօնքին հիմը ժողովուրդին սրտէն ու մըտքէն խախտեն մարդիկ—թեթեամիտ ուսուցիչներ կամ անխորհուրդ կրօնականներ,— ժողովուրդն այլևս իր կրուկն ու կոնակը կը դարձնէ իր եկեղեցականներուն, և անկումէ անկում գլտորելով՝ կործանման վիճը կը դիմէ։ Ժողովուրդի մը հոգին է, այո՛, կրօնքը, որ օրէնքէ աւելի վարած է ու կը վարէ ազգերը։ Կրօնքի՛ն կը պարտի մարդկութիւնն իր այսօրուան՝ ինչպէս վաղուան՝

քաղաքակրթութիւնն ու բարոյականի վերանորոգումը, Կրօնական մը, որ կը փորձուի կրօնքի դէմ խօսիլ, Աւետարանի քարոզած չար պտուղի ծառն է, գայթակղեցնող անդամն է, զոր Յիսուս կտրել նետել պատուիրած է: Այս էր Ստանի բարի երէցին հաւատքն, և ասոր համար ջերմապէս փոյթ կը տանէր ժողովուրդը Կրօնապէս կրթելու, և հաւատքը բոլոր ուժովը կը զօրացնէր իր գեղջուկ հօտին հոգւոյն մէջ: Կրօնքին, հաւատքին լոյսն է, կ'ըսէր, հոգիներու ղեկավարը, կողմնացոյցը. առանց կրօնքին գրկապինդ փարելու, ալեկոծումէ ալեկոծում կը նաւարակինք: Կրօնքի մասին ու է աննշան զխողովութիւն կամ անտարբերութիւն Աստուծոյ դէմ հայհոյանք կը համարէր: Եւ այս նկատմամբ ա'յնքան նախանձախնդիր էր որ կը պատմուի թէ օր մը կէս ճամբէն ետ դարձուցեր էր վիճակին առաջնորդը, զոր տարեկան պտղին ժողովուրդ և Մեծ Տօնին պատարագն ընելու համար՝ յատուկ պատուիրակներով իր գիւղն հրաւիրած էր: Երբ կ'իմանայ որ Առաջնորդը Զորեքչաթի և Ուրբաթ օրերը պահքը կ'ուտէ, Մեծ Պահքին ծոմ չի բռներ, նարտ, թուղթ կը խաղայ, և ստէպ ալ իր առաջնորդական խնամոց յանձնուած ժողովուրդը՝ անհովիւ հօտի մը պէս՝ անգուլիս ու երեսի վրայ թողլով, ուրիշ քաղաքներ կ'երթայ դաբապա ընելու, իր փէնէհէգեան նախանձայուզութեան մէջ ա'յնքան կը դժբաղուի որ խկոյն դէպի մօտակայ արօտավայրն արածուող նախիրը վազելով, զամբիկին դաւակը կը ցատկէ ու ետեւէն հասնելով գզելու, բզկտելու կը պատրաստուի: Գիւղացիք ամբողջ հազիւ կրցեր են զսպել Աստուծոյ ու մարդկան այս քաջ հովուին արդար ու փրփրալիք ցառումը:

Գիւղին հաստատումէն ի վեր՝ որդի ի հօրէ ժառանգելով քահանայական Ս. կարգն ու պաշտօնը, Տ. Տաթեւ իր Ս. նախնեաց ու Ս. Հարց աւանդութեանց ու դաւանութեանց հոգին ու սէրը ա'լ աւելի կ'արծարծէր կը ծաւալէր իր տգէտ հօտին մէջ, Վարուցանքի, հունձքի, կութքի, կալի ատեն Աւետարանն ու խաչը գրկած, անդաստան դառնալու պէս կը վազէր կը հասնէր սերմնացանին արտը, մանգաղուորաց քով, կա-

լորաները, կամնողաց մօտ. կը կարդար Ս. Գիրքը ու կ'օրհնէր անոնց օրուան վաստակն ու բերքը: Գիւղին մէջ աղքատ ու անգործ մարդ չի կար, ո'չ ալ՝ երկրին մէջ՝ ափ մը հող անմշակ: Կլիման ա'յնքան քաջառողջ էր որ ոչ մէկ համաճարակ կամ տարափոխիկ ախտ հոն մուտ չէր գտած: Տէրտէրը սլատուաստի մենաշնորհն ունէր: Ստանի մէջ ա'յս էր կրօնական, բարոյական, կրթական ու տնտեսական վիճակը: Խաղաղ, երջանիկ վիճակ մը՝ որ հիներուն մշակաց ոսկեդարը կը յիշեցնէր, ու նոր գտնուած դրախտի մը մանրանկարը կը պատկերացնէր, գալիք ընտանեկան կործանարար ճգնաճեղհներուն թատրը ինելէ առաջ, ինչպէս որ ընթերցողը սրտի խշխշուքով մը պիտի կարդայ սոյն գիւղավայրին շարունակութեանը մէջ:

3

ՍՏԱՆԻ ՆԱՀԱՊԵՏՈՒ

Խէփէնց Տիրօ նահապետը գիւղին ամենահին ու բազմանդամ գերդաստանին կրտսեր զաւակն էր: Գիւղին կէսէն աւելին այդ տան ազգականաց շրջանակ կը կազմէր: Մանկութեան ատեն, չի գիտցուիր ի'նչ պատճառաւ, գիւղէն կը հեռանայ, և հեռաւոր բարեբեր երկրի մը մեծ քաղաքին մէջ իբրեւ գաղթական կը հաստատուի: Հոն տեղւոյն մեծաւոր իշխանին աջքը կը մտնէ իր աջալուրջ գործունէութեամբ ու բարակամիտ հնարագիտութեամբ, զոր ի բնէ, ի նախնեաց անտի իբրեւ ցեղական յատկութիւն ժառանգած էր: Զաւակներն իրենց ծնողաց արեան ու դիմագծութեան հետ կը ժառանգեն նաև անոնց յոռի թէ բարի յատկութիւնները, ամբողջ ցեղին և ազգին աւանդական առաքինութիւններն ու մոլութիւնները, ինչպէս կը վկայեն ու կը հաստատեն հոգեբանական նորոգ գիտութիւնք ու իմաստասիրական վարդապետութիւնք: Նահապետ, իր նոր հաստատուած երկրին մէջ տուն տեղ եղած, աշխարհք մտած և բաւական թուով մանչ ու աղջիկ զաւակներու հայր եղած էր: Իրեն կին ածած էր իրեն պատկաւարակից ու հայրենակից Գոմրենց թոռնուհին՝ առաքինաբարոյ և տանտիկին օրիորդ Անոյշը, որոյ գեղեցկութեան ու

համեստութեան համարը մօտ թէ հեռուն տարածուած էր, և զոր շատ մ'անուանի դերդաստաններ իրենց հարսնացու խնդրած էին: Ստանցիք՝ Չինացւոց ու Հնդկաց պէս՝ հնաւանդ սովորամոլութիւն մ'ունէին. ո՛չ օտար երկրացւոց կամ գիւղացւոց աղջիկ կուտային և ոչ ալ անոնցմէ աղջիկ կ'առնէին: Իր խնամին իր գեղացին կամ քաղաքացին ըլլալու էր: Այնքան կը սիրէին իրենց բնիկ գիւղը: Եւ այնպէս կը հաւատային թէ հեռի կամ օտար երկիր մուտն ունէր հոգին դէպ Աստուած կամ արքայութիւն տանող երկնային ճանապարհը չի կըրնար գտնել, եւ երկնքի ու երկրի մէջ՝ թափառական Ախվէրուն Հրեային պէս՝ կը մտլորակի մինչեւ վերջին դատաստանին օրը: Անոր համար Չինացին կամ Հնդկը, ժամանակ մը պանդխտելէ յետոյ, խիոյն կը վերադառնայ իր բնիկ երկիրը, զոր կը դաւանի աշխարհի պորտը, մեղքեղը ու կեղրոնը, ուրկէ միայն հոգիները կրնան չիփ շիտակ երկինք ճամբորդել յետ մահուան: Ստանցիք ալ՝ Միջին Ասիոյ բնակիչք՝ կոնփիւկէցուի և Պրահմաչի թուներուն պէս՝ թէեւ իրենց երկրէն դուրս ալ ապրին, իրենց երկրացւոց հետ կը կարգուին, և չի մեռած՝ երկիր կը վերադառնան՝ անպատճառ իրենց ծնողաց հողքին մէջ թաղուելու համար:

Անակնկալ դէպքեր, երկրաշարժներ, լիւղղումներ, ողողմունք, սովք ու համաճարակներ հիմնայտակ, այրացաւեր ըրին ու անապատի վերածեցին այն երկիրը՝ ուր պանդխտած էին մեր Ստանցի երկու խնամիները եւ մեծ կալուածատէր ու հարուստ դրամատէրներ եղած էին. բայց մօրէ մերկ եղածի պէս խղճալի վիճակի մ'ենթարկուեցան այս աղետալի պատահարներու երեսէն: Փութացին վերադառնալ իրենց հարց ու նախնեաց բնիկ գիւղը: Հոն վերստին գործի ձեռնարկելով՝ շէնցուցին իրենց հայրենական ընդարձակ կալուածները, զորս այլք կը շահագործէին իրենց բացակայութեան ատեն:

Ստանցւոց համար նոր Աւետեաց տօն մը եղաւ իրենց ինքնէնց Տիրօ նահապետին և Գոմրենց Թորմոզին ընտանեօք, գաւակներով, աղխերով հանդերձ իրենց քով վերադար-

ձը, զոր զրեթէ շաբաթ մ'ամբողջ այլևայլ հանդէսներով, խնջոյքներով, ժողովրդային փայլուն ցոյցերով և խանդավառ ցնծութեամբ ու երգերով պատուեցին:

Մինչեւ այսօր դեռ այդ կողմի անչքացած շինականներէն հիներն երբեմն տօնի, հարսնիքի, խնջոյքի եւ գիւղական զուարճութեանց ատեն կ'եղանակեն այն ատենի երգերը, որոնց հատուկոտորները կը համարուին յետագայ մէկ քանի տողերը, զորս լսած, քաղած ենք Ստանի ռամիկ պառաւներուն բերնէն:

Մեր նահապետ նժոյգն հեծեր,
Սար, ձոր դափեր, Ստանն հասեր.
Ստանն հասեր, մեր տունն եկեր.
Մեր տունն եկեր, մեր հայրն եղեր:
Ա՛յ, ա՛յ Ստան
Մեր սուրբ ոստան.

Դէմքը տեսանք, մեր աչքն առին.
Հարաւ տեսանք, լո՛ւս մեր աչքին.
Անունն Անոյշ, ինքը՝ քնքոյշ,
Լեզուն մեղր է, խօսքերն անոյշ:
Ա՛յ, ա՛յ Ստան, ելն.

Լեռ, ձոր մեզ հետ ելան ճամբայ,
Նահապետին բռնալ ճամբայ.
Ճամբան մեզ հետ Ստան եկաւ,
Նահապետը Ստան բերաւ:
Ա՛յ, ա՛յ Ստան, ելն.

Մենք ծափ զարկինք, ծառք պարեցին
Նահապետին բարե տունին,
Նահապետին տուն շինեցին,
Մեր Ստանին տէր տնկեցին:
Ա՛յ, ա՛յ Ստան, ելն.

Նահապետին ապաստանին,
Հողդ պսղենք, հողդ մտնենք.
Տանք մեր հոգին մատաղադին:

* * *

Ուրիշ պատառիկ մ'է հետեւեալ.

Մութը լուսեր, լուսն է ծախեր,
Մեր Ստանին արևն եկեր.

Աղջիկ ելիր, ասելով ա՛ռ,
Կարէ՛ հարսի շապիկդ վառ .
Նահապետին տղան եկեր,
Սէրը քեզի նշան բերեր .
Մեր Ստանին աղջիկները
Քեզ աչքի լոյս եկան վարը :

Ուրիշ մ'ալ .

Ինչպէս ծառը լուսած հողէն
Ինչպէս ժայռը նստած տեղէն ,
Նոյնպէս ես ալ իմ Ստանէն
Ձեմ բաժնուիր , ի՛նչ ալ ընեն :

Իմ տէրս զիս հո՛ն ստեղծեր
Թագաւորը զիս հո՛ն դրեր .
Հայրս զիս հո՛ն փեսայ ըրեր ,
Տէր Պապաս զիս հոն մկրտեր :

Արեւը ինձ հո՛ն լոյս տուեր .
Հո՛ն լացեր եմ, հո՛ն խնդացեր .
Հո՛ն ինկեր եմ, հո՛ն ելեր եմ,
Ճորով մորով մարդ եղեր եմ :

Հոն՝ մէն մի քար, հոն՝ մէն մի ծառ
Յիշատակ մը ունի անճառ .
Հոն անցեալիս ծաղիկները
Դեռ զարդարեն իմ դրախտը :


Օտար հողն իսկ ոսկի բղխէ,
Օտարն իր թագն իսկ ինձ ձօնէ .
Ձեմ զատուիր ես իմ Ստանէն,
Թո՛ղ հոն ապրիմ, զիս հո՛ն թաղեն :

Բոլոր այս եւ ասոնց նման հատուկոտոր
երգերու մնացորդներէն կը հասկցուի թէ
Ստանցիք, ինչպէս իրենց Աստուծոյ, իրենց
կրօնքին, հաւատքին, նոյնպէս ալ իրենց
թագաւորին ու երկրին հետ նոյն ջերմ սիրոյ,
նոյն սերտ հաւատարմութեան անխզելի կա-
պերով կապուած, թէև լեռնարնակ այլ միշտ
խաղաղասէր ու բարի ժողովուրդ մ'եղած
են . Պանդխտութենէ խորշած են եւ սա-
տահական պանդխտութենէ վերադարձող-
ներուն վրայ ալ, իբրեւ մեռեալներէն յա-
րութիւն առնողներու վրայ, այնպէս ուրա-
խացեր ու երգեր են . Եւ արդարեւ յաճախ

պանդխտները կը նմանին անապատներու
մէջ հոսող գետերուն այնպէ՛ որք աւազնե-
րու մէջ անհետ կը կորսուին :

Աւելորդ է յիշատակել թէ Ստանի Տէր
Հայրը, պանդխտութենէ վերադարձողնե-
րուն ի պատիւ, գիւղին Ս. Լուսաւորիչ եկե-
ղեցւոյն մէջ պատարագեց, խոստովանցուց
և հաղորդեց ամենքն ալ . ապա ժողովուր-
դին հետ անոնց տունները երթալով, գեր-
դաստանին մեծէն մինչեւ պզտիկը օրհնեց,
խրատեց . Կարդաց Աւետարան և Նարեկ :
Անոնց ննջեցելոց հոգեհանգիստը կատարեց,
Պահպանիչն ըսաւ և «Հայր մեր»ով աւար-
տեց : Սոսք առաւ խօսք տուաւ որ որոշեալ
օր մը՝ գիւղացւոց հետ հանդիսաւոր կեր-
պով ուխտի երթան Աղամայ Զոր և Յաւաի
Պարթեզ անուն մեծ ուխտատեղին, որ գիւ-
ղին սեփական բոլոր Ս. Տեղեաց մէջ ա-
մէնէն հեռաւորը, ամէնէն զօրաւորը, ամէ-
նէն նշանաւորն ու հրաշագործն էր : Հոն
արձաք-Աղբիւր անուամբ մշտաբուղիս աւա-
զան մը կար . Անոր ջրով ո՛վ որ լուանար
իր ցաւոտ, բժոտ աչքը, վէրքերը, բորը,
դոսը, գոնջը (քէլ), ուռեցքը, ցաւ կամ խիթ
ղգացած ու է մէկ անդամը կամ կողմը խ-
կոյն կը բժշկուէր : Գիտնական խուզարկու-
թիւնք վերլուծելով այդ ջուրը, հաստատած
են թէ արդարեւ Արձաք-Աղբիւրի ջուրը՝
մինչեւ աստիճան մը՝ բաւական բուժարար
յատկութիւններ ունի : Սոյն ուխտատեղ-
ւոյն ուրիշ հրաշագործ հանգամանքները պի-
տի նկարենք՝ երբ գիւղավէպին կարգը
հասնի ուխտագնացութեան հանդէսին, որ
հետաքրքրաշարժ և յուզիչ պատկերներով
լի է :

Շարունակելի



ԹՕՄԱՆՍ

Սեւ գիրդ վարսերու փունջերը բուրեան
Հիմա ճերմկեցեր են ինչպէս փրփուր։
Հայլին ամայի, հայլին է թափուր,
Հո՛ն ծիծղուն, թարմիկ դէմքերն ա՛լ չը
կան...

Հիմայ ճերմկեցեր են ինչպէս փրփուր։
Հէգ, ձիւն ճակատներ ծըռեր են իսպառ,
Ու ալ պէտք չունին զարդերուն յիմար...
Անկիւնն մ'է թողուեր հայլին մահաբոյր։

Հէգ, ձիւն ճակատներ ծըռեր են իսպառ,
Իր բոյնը ճերմակ մաներ է Յաւն հոն...
Ու հին պըճլտուն աչքերը մրայօն
Վարագուրեր են աղօթքի համար...

Իր ամպը թախծոտ դըրեր է Յաւն հոն...
Նայուածքներ մարեր են բիւրեղին գոգ,
Վտիտ ըստուերներ կը ծնրադրեն լոկ
Անկիւններուն մէջ սրահին անգործօն...

Նայուածքներ մարեր են բիւրեղին գոգ,
Սեւ խոշոր աչքերն հոն ալ կը ցնդին...
Սառ փոշիին տակ կը խոկայ հայլին
Հիւանդոտ փայլով մը մարմարի գոգ...

Սեւ խոշոր աչքերն հոն ա՛լ կը ցնդին...
Ու թարմիկ գիծերն հին պերճ դէմքերուն,
Ծաղրանկարով մը կարծես թառամուն
Փոշիին տակէն ինծի կը ժպտին...

ԵԳՈՒԱՐԴ ԳՕԼԱՆՃԵԱՆ

ՔԻՉ ՍԸ ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Երկու խմբադիր թրամուէյին մէջ։

— Բարեւ, Տիար Տ... , ի՞նչ կ'անցնի կը
դառնայ։

— Ո՛ւր, Թուկէլայի շո՛ւրջը. Չօր, Պուլ-
լըր պարզապէս «Դուք մէջէն ես քովէն» կը
խաղայ, բայց այս փաշիլին վարիչը միշտ
Պօշէրներն են։

— Չէ՛, ես այդ չհարցուցի։

— Հապա ի՞նչ կը հարցնես։

— Սո՛ւ լրագրական չըջանակներուն մէջ։

— Չե՞ս տեսներ կոր, ամէն օր նոր նոր
լրագիր, նոր նոր հանդէս լոյս տեսներու
վրայ է, ասոր ծայրը ո՛ւր պիտի երթայ։

— Եկէք միասին, մենավաճառ մը կադ-
մենք. ամէն րանի մենավաճառ կ'ըլլայ, ին-
չո՛ւ լրագրականը չըլլայ։

— Առաջարկդ ես գործնական չեմ գըտ-
ներ. տեսա՞ծ ես որ մեզմէ երկու հոգի ի-
րարու հետ համաձայնին խնդրոյ մը վրայ,
ո՛ւր մնաց իրենց շահերը, իրենց քսակները
հաշտեցնեն։

— Հապա ի՞նչ ընելու է։

— Համբերելու է, ապիկարները՝ ուզեն
չուզեն՝ թուրի պէս պիտի թափին։

* * *

Երկու ընթերցողներ։

— Առաջնորդները ի՞նչ կ'ընեն, կրթու-
թեան հոգ կը տանի՞ն։

— Եթէ մեծկակ օրագրի մը խօսքին հա-
ւատաս, Պրուսայի եւ Նիկոմիդիոյ առաջ-
նորդներէն դատ, ամենքն ալ հոգ կը տանին։

— Բայց ի՞նչպէս կ'ըլլայ այդ. ուրիշ
գաւառներու մէջ կարօտութիւն կայ եւլն.
կ'ըսեն, կրթութիւնը դրամով կ'ըլլայ, մինչ-
դեռ ձեր այդ յիշած երկու գաւառներուն
մէջ կարօտութիւն չկայ. ձգէ սա՛ Պրուսան,
առնեն՝ք Նիկոմիդիան, չէ՞ մի որ Ատարա-
զարցիները, Պարտիզակցիները, Նիկոմիդա-
ցիները, իրենք են ըսողը թէ իրենց դպրոց-
ներն է՛ն յառաջագէմներն են։

— Եղբայր, չիտակը կ'ուզե՞ս, լրագիր
մը երբ միտքը դնէ այս ինչ կամ այն ինչ
առաջնորդին դէմ խօսիլ, նախ ուրիշները կը
դռվէ, իրական եւ երեւակայական բարե-
մասնութիւններ, գործունէութիւններ կը
վերագրէ անոնց, զորս միւսներուն ձրի կը
զլանայ։

— Բայց ուրիշ թերթ մ'ալ չարունակ
Պրուսայի եւ Նիկոմիդիոյ առաջնորդներուն
գործունէութիւնը գովելու վրայ է. այս
ի՞նչ հակասութիւն է։

— Հակասութիւն չէ, սիրելիս. հարկաւ
անանկ պիտի ընէ. ատիկա բաժանորդները
չատցներու միջոց մ'է. մէկ երկու օր խմբա-
գլու թիւն ըլլէ, դուն ալ կը հասկնաս։

* * *

Սկիւտարի չոգենաւին մէջ, երկու ուղե-
ւորք։

— Ի՞նչ գոյն ունինք, կը հարցնեն չա-
րունակ։

—Այդ հարցումն ընդունեցրը գոյն չունին, կ'ուզեն որ իրենք ալ գոյն ունենան :

—Բայց սա՛ Հանրագիտակն ի՞նչ գոյն ունի, ամէն շարժու կողք կը փոխէ, ո՞րն է իւր տիրող գոյնը արդեօք :

—Ատիկա Տքդ. Թ. . .ին հարցնելու է, արդեօք բժշկական տեսակէտով երեսի գոյնը կրնա՞յ ներսի գոյնն ալ երեւան հանել :

—Հանրագիտակի գոյնը դեռ չհասկցա՞ք, գաւառներու մէջ գիտական եւ ուսումնական ծանօթութիւններ տարածել է, գրականութիւնը մշակել է :

—Հրատարակիչները բաց բեմ մը հռչակեցին թերթն, բայց իրենց գոյնը դուրս չտուին :

—Անոնք գոյնէ խարուողներ չեն, գործի մարդ են, վերջէն կը տեսնէք :

* * *

Երկու օրիորդներ եկեղեցւոյ մէջ.

—Բարի լոյս, սիրելիդ իմ Աղնիւ, ո՞ր կապել տուիք զխարկնիդ :

—Բառերին, ինչպէս սովորաբար. իսկ դո՞ւք :

—Բարասին, քանի որ դիտէք թէ դժբախտը շատ կը սիրեմ :

Երկուքն ալ կը ստէին : Երբ եկեղեցիէն դուրս ելան, մին կէս բարձրաձայն ըսաւ ինքն իրեն .

—Սաբուեցա՞ւ, ինչպէս կը խաբուին ամենքն ալ, երբ Բերայի խանութներուն կը դիմեն կրկնապատիկ գին վճարելու քանի որ լաւագոյնը կարող են ինծի պէս կէս դնով գնել Հիւսէյինճեան ծանօթ վաճառատունէն :

* * *

— Բարիլոյս Սաղաթիէլ աղա :

— Աստուծոյ բարին :

— Այդ ո՞րքան կարմրեր ես :

— Հիմա տաք տաք երկու գաւաթ թէյ խմեցի եւ այնպէս տունէն դուրս ելայ :

— Ես ալ խմեցի բայց չեմ կարմրած, չիտակը կ'ուզե՞ս, թէյերն իրենց համը կորսնցուցեր են, խոտի պէս բան մը դարձեր են :

— Ուրիշ՞ կ'առնես կոր :

— Պարսիկներէն :

— Անոր համար է որ համ չես առներ կոր :

— Դուն ուրիշ՞ կ'առնես :

— Ես հանրածանօթ եւ պատուաւոր հայ վաճառատունէն չեմ դատուիր :

— Ո՞ւր է այդ ըսած վաճառատունդ :

— Պահճէ-Գարու Ճէլալ պէյ խան

Իսաղուլեան եւ Եավրուեան .

Կ'երթաս կ'առնես թէյ՝ մի ծրար,

Անուշահոտ, առողջարար :

* * *

— Բարե՛ւ, բարեկամ :

— Աստուծոյ բարին :

— Ինչո՞ւ այդքան նիհարցեր ես, քիչ մը ձկան իւղ չգործածե՞ս :

— Կը խմեմ կոր, եղբայր, բայց օգուտ քաղած չունիմ :

— Կ'երեւի թէ կեղծն է. ես քեզի դեղարան մը ըսեմ, անկէ ա՛ռ : Սուլթանիէդեղարանը գիտե՞ս :

— Ո՞ւր է որ :

— Կէտիկ-Փաշա Պաշի, ծանօթ դեղարան զոր կը վարէ Լեւոն Կիւմիւշեան :

ԱՅԼԱՓՈԽԵԱԼ ԲԱՌԱՐԱՆ

Աղգակաց. — Եթէ հարուստ է, ձգողական զօրութիւն ունի, եթէ աղքատ է, վանդակա՛ն :

Աղջիկ. — Ապրանք մը զոր ծախելու համար դրամ վճարել պէտք է գնորդին :

Անկողիւն. — Երեքուն գերեզման մը, որ երկու երես ունի, գիշերը՝ մահուան եւ առաւօտուն՝ յարութեան :

Արձան. — Անգագայ ծառ մը, որ մեծ մարդոց վրայ միայն կը բուսնի :

Առողջութիւն. — Բժիշկներուն ու դեղագործներուն ֆեստութիւնը :

Ամուսնութիւն. — Ընկերութիւն մը զոր կնքողներն ինքնին չեն կրնար լուծել, առանց հաւանութեան երրորդի մը :

Աչառութիւն. — Բաղաձայն մը որ ուրիշ ձայնաւորի պէտք չունի, եթէ դեղնորակ մետաղին ձայնը կայ :

Աղփասութիւն. — Բաղաձայն մը, որ ինքնին ձայն չունի. . . հանրային կարծիք ըսուածին մէջ :

Ասելութիւն. — Ապրանք մը զոր հրապարակաբար այս պահուստ շուրջաբար կը ծախեն իրարու, քանի որ դրամը վճարողը ժողովուրդն է :

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY

OF THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY
OF THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY

OF THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY
OF THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY

OF THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY
OF THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY

OF THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY
OF THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY

OF THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY
OF THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY

ԳՐԱՆԻ ԲԱՌԳՐՔՈՅԿ

ՖՐԱՆՍԱՀԱՅ

Գին 5 Դրուտ

800 փոքրագիր երեսներէ բաղկացած սիրուն գրքոյկ մը, որ 13—14,000 բառերու ու ներու եւ բնական ասացումներու հաւաքոյթ մ'է եւ Ֆրանսերէն ուսանողներու անբաժան բնկերը: Գնեցե՛ք մէկ մէկ օրինակ եւ ձեր զաւկին ձեռքը տուէ՛ք, վստահ ըլլալով որ այդ գրքոյկ պիտի սրէ անոր ուսման փափաքը: 10 օրինակ մէկէն առնողին 30 առ 100 գեղջ: Դիմեցե՛ք միայն Հանրագիտակի Տնօրէնութեան:

Պատկերազարդ Աշխարհագրութիւն

ՊՕԶԱՃԵԱՆ

Գին 4 Դրուտ

Լոյս տեսաւ Ն. Պերպէրեան մամուլը տպագրութեամբ, քաղ. վերջին փոփոխութեանց եւ Կրթական ծրագրին համաձայն: Մայրաքաղաքիս Կ'ն կարեւոր դպրոցներն անմիջապէս բնորոնեցին զայն իրենց դասագրոց ցանկին մէջ:

Փետրեմբեր 1900ի տպագրութեամբ, որ 208 էջերէ կը բաղկանայ, եւ իր պատրուակած պատմական, գիտական, առեւտրական եւ ցեղային ծանօթութիւններով, աշխարհագրութեան Ա. դասագիրքը կը հանդիսանայ եւ արժանի է ամէն ուսուցչի ուշադրութեան:

Հանրագիտակի Տնօրէնութիւնը կը հայրապէ մեծաքանակ 30 առ 100 գեղջով:

ՄԵԾ ՄԹԵՐԱՆՈՑ ԴԵՂՕՐԷԻՑ

Կրէկուառ Ղազարօթ եւ Ընկ.

Պատիւ ունինք ծանուցանել թէ վաճառատունս փոխադրուած է Սասքիէ խան թիւ 1 եւ 2: Ներդաշնակ բոլոր կեդրոններուն հետ իր ունեցած յարաբերութեանց շնորհիւ, բարձր դերու անհուն պէսապիսութիւն մը միշտ պատրաստ ունի մեծաքանակ, ինչպէս նաեւ ժողովրդական համբաւ վայելող ներդաշնակ բժիշկներու մասնագիտական պատրաստ դեղերը ու ամէն տեսակ հանձնարար ջուրերը: Գաւառներէ եղած յանձնարարութիւնք հեղիւ ու փութով կը կատարուին, անմեղելի կերպիւ ածանց գներով:

Դիմեցե՛ք եւ պիտի համոզուիք:

ԿԱՌԵԻՈՐ Ա.ԶԳ.— Հանրագիտակի կողքին երեք էջերը ծանուցմանց յատկացուած են: Անոնք որ կը հաճին մէկ տարեկան բաժանորդագրուիլ, կրնան իրենց ծանուցումները ԶԳԻ հրատարակել տալ, 10 անգամ տող, 5 անգամ մուտք համար. իսկ 50 տող մէկ անգամ մուտք համար:

Բաժանորդագրութիւնք կ'ընդունուին, եռամսեայ, վեցամսեայ եւ տարեկան:

ՄԵՐ ՀԱՍՏԵՆ

«Հանրագիտակ»ի վերաբերեալ ամէն գրութիւն պէ՛տ է ուղղել Նեան Պերպէրեան տպարանը, Էսփր զապիյէ հասցէսի թիւ 61, առ Տնօրէնութիւն եւ խմբագրութիւն «Հանրագիտակ»ի